

decomposing inequality coefficients by population groups. That methodology was applied to the incomes of the Armenian population. In particular, was discussed the Gini Index and the Theil Index decomposition by the settlement of households and by the sex of the head of household.

## ԷԼԵՆ ԱՎԱԼՅԱՆ

Հաշվապահական հաշվառում ըստ ճյուղերի,  
մագիստրատուրա, 2-րդ կուրս

## ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԻ ՎՐԱ ՆՅՈՒԹԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**Հիմնաբառեր.** նյութատարություն, նյութածախս, շահութաբերություն, արտադրության ծավալ

Արտադրության նյութատար ոլորտում կարևոր դեր ունի հումքի և նյութերի օգտագործման արդյունավետության բարձրացումը, քանի որ դրանց հետ կապված ծախսերն արտադրանքի ինքնարժեքում գերակշիռ մաս են կազմում, և յուրաքանչյուր միավորի թողարկման ընթացքում այդ ծախսերի չնչին կրճատումն անգամ ամբողջ կազմակերպության մասշտաբով նշանակալի արդյունք է տալիս:

Եթե կազմակերպությունը իր առջև շահույթ ստանալու խնդիր է դրել, ապա միջոցները պետք է օգտագործվեն առավել արդյունավետ:

Ներկայումս ցանկացած արտադրական կազմակերպության կարևորագույն խնդիրներից է նյութական պաշարների խնայողական օգտագործումը, քանի որ հենց նյութական ծախսումներն են կազմում արտադրական ծախսումների մեծ մասը, որոնցից անմիջականորեն կախված է շահույթի մեծությունը:

Նյութերի արդյունավետ օգտագործումը հանգեցնում է կազմակերպության տնտեսական գործունեության բարելավմանը, շահութաբերության ցուցանիշների բարձրացմանը: Նյութական պաշարների խնայողական օգտագործումը բարելավում է արտադրության արդյունավետությունը բնութագրող տնտեսական ցուցանիշները, իսկ նյութական պաշարների թերագնահատումը կարող է հանգեցնել արտադրական ծրագրի չեղարկմանը և այլն:

Կարևորագույն խնդիրներից են նաև նյութատարության կրճատումը, բոլոր այն գործոնների ուսումնասիրությունը, որոնցից կախված է հումքի և նյութերի արդյունավետ օգտագործումը:

Նյութական պաշարների կառավարումը կազմակերպության համար ունի մեծ նշանակություն ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ ֆինանսական առումով: Մեր օրերում լայնորեն կիրառվում են ինչպես բնական, այնպես էլ արհեստական նյութական պաշարներ, իսկ արտադրական և կենցաղային թափոնները համարվում են երկրորդային նյութական պաշարներ<sup>1</sup>:

Եթե յուրաքանչյուր կազմակերպությունում արտադրության գործընթացն անընդհատ է, ապա ընթացիկ ակտիվները գտնվում են միաժամանակ և՛ արտադրության, և՛ շրջանառության փուլում:

Գոյություն ունեն պաշարները խնայողաբար օգտագործելու աղբյուրներ և ուղիներ: Խնայողության աղբյուրները մատնանշում են, թե ինչի հաշվին

<sup>1</sup> Տե՛ս Դ. Բ. Бердникова, Анализ и диагностика финансово-хозяйственной деятельности предприятия, Москва, 2007 г., էջ 139:

կարելի է հասնել խնայողության, իսկ խնայողության ուղիները ցույց են տալիս այն ձևերը, որոնց արդյունքում կարող է կատարվել այդ խնայողությունը:

Նյութական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատման առավել ընդհանրական ցուցանիշ է համարվում նյութական ծախսումների մեկ դրամին բաժին ընկնող շահույթի մեծությունը՝ նյութերի շահութաբերությունը ( $\zeta_p$ ): Այն որոշվում է հիմնական գործունեությունից շահույթի ( $\zeta$ ) և նյութական ծախսումների ( $U_\delta$ ) հարաբերակցությամբ.

$$\zeta_p = \frac{\zeta}{U_\delta} :$$

Արտադրանքի նյութատարությունը ( $U_m$ ) նյութական ծախսումների գումարի և թողարկված արտադրանքի ծավալի ( $U$ ) հարաբերակցությունն է<sup>1</sup>:

$$U_m = \frac{U_\delta}{U} :$$

Եթե նշված բանաձևի համարիչում ընդունենք ամբողջ նյութական ծախսումների գումարը, ապա կստանանք ընդհանուր նյութատարության ցուցանիշը: Բացի դրանից, գոյություն ունեն նյութատարության այլ ցուցանիշներ ևս՝ մասնակի և տեսակարար:

Նյութահատույցը ցույց է տալիս, թե միավոր նյութական ծախսումներով որքան արտադրանք է արտադրվել: Այն նյութատարության հակադարձ մեծությունն է և որոշվում է արտադրանքի ծավալի ( $U$ ) և նյութական ծախսումների ( $U_\delta$ ) հարաբերակցությամբ.

$$U_h = \frac{U}{U_\delta} :$$

Արտադրության պլանի կատարման, ինքնարժեքի իջեցման, շահույթի և շահութաբերության ավելացման համար անհրաժեշտ պայման է կազմակերպությունը համապատասխան տեսակի և որակի հումքով ու նյութական ռեսուրսներով ապահովելը<sup>2</sup>:

Այժմ հաշվարկենք հետևյալ ցուցանիշները  $X$  կազմակերպության օրինակով:

Ինչպես նկատում ենք աղյուսակից 1-ից, 1 դրամ նյութական ծախսումներից,  $2 \times 0$  թ. ստացվել է 2.3 դրամ հասույթ և 0.18 դրամ շահույթ, իսկ  $2 \times 1$  թ. համապատասխանաբար՝ 2.59 դրամ հասույթ և 0.3 դրամ շահույթ:  $2 \times 1$  թ., նախորդ տարվա համեմատ, նյութահատույցի աճի տեմպը կազմել է 1.13 (կամ յուրաքանչյուր 1 դրամ նյութական ծախսումների հաշվով հասույթը ավելացել է 0.29 դրամով), ինչը դրական է բնութագրում նյութական պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացման գործընթացը: Առավել ուշադիր լինելով կնկատենք, որ նյութերի շահութաբերության աճի տեմպը կազմել է 1.62 (կամ յուրաքանչյուր 1 դրամ նյութական ծախսումների հաշվով շահույթը ավելացել է 0.12 դրամով): Նյութատարության ցուցանիշի աճի տեմպը, ինչպես նկատում ենք, կազմել է 0.89, ինչի 1-ից փոքր լինելը վկայում է այն մասին, որ նյութերը արտադրությունում օգտագործվել են առավել խնայողաբար:

<sup>1</sup> Տե՛ս Н.В. Войтоловская, Экономический анализ, 2-е издание, Москва, 2006 г., էջ 163:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Անդրեասյան, Տնտեսական գործունեության վերլուծություն, Երևան, 2003 թ., էջ 45:

Աղյուսակ 1

Նյութական պաշարների օգտագործման արդյունավետությունը  
(արտադրանքի ամբողջ ծավալ)

Ցուցանիշ	2xx0 թ.	2xx1 թ.	Աճի տեմպ
1.Թողարկված արտադրանք վաճառքի գներով (հազ.դրամ)	420398.30	731354.90	1.74
2.Նյութական ծախսումներ (հազ.դրամ)	182902.30	282208.00	1.54
3.Իրացումից շահույթ (հազ.դրամ)	33562.7	84130.00	2.51
4.Նյութերի շահութաբերություն	0.18	0.30	1.62
5.Նյութատարություն	0.44	0.39	0.89
6.Նյութահատույց	2.30	2.59	1.13

Վերլուծության մեկ այլ ուղղություն է արտադրանքի թողարկման ծավալի վրա նյութական ծախսումների փոփոխության ազդեցության ուսումնասիրումը:

Աղյուսակ 2

Թողարկման ծավալի գործոնային վերլուծություն  
(արտադրանքի ամբողջ ծավալ)

Ցուցանիշ	2xx0 թ.	2xx1 թ.	Շեղում
1.Թողարկված արտադրանք վաճառքի գներով (հազ. դրամ)	420398.30	731354.90	310956.6
2.Նյութական ծախսումներ (հազ. դրամ)	182902.30	282208.00	99305.7
3.Նյութահատույց	2.2985	2.5915	0.2931

Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, արտադրանքի թողարկման ծավալի (310956.6) փոփոխության հիմնական մասը բաժին է ընկնում նյութական ծախսումների ազդեցությանը: Երկու ազդեցությունների արդյունքում արտադրանքի թողարկումը 2xx1 թ., 2xx0-ի համեմատ, ավելացել է 310956.6 հազ. դրամով:

Վերլուծության գործընթացում անհրաժեշտ է նաև որոշել նյութատարության ազդեցությունը արտադրանքի ինքնարժեքի և ծավալի վրա: Արտադրանքի նյութատարության մակարդակի նվազեցումը հանգեցնում է նյութական պաշարների տնտեսման, հնարավորություն է տալիս թողարկելու լրացուցիչ արտադրանք և հակառակը: Նյութատարության մակարդակի նվազեցումը հանգեցնում է կայուն ֆինանսական արդյունքների ապահովման:

2xx1 թ., 2xx0-ի համեմատ, նյութատարության կրճատման արդյունքում արտադրանքի ինքնարժեքը նվազել է 36567.75 հազ. դրամով, ինչը դրական է ազդել կազմակերպության ֆինանսական արդյունքի վրա: Իսկ նյութատարության կրճատման հետևանքով թողարկման ծավալը ավելացել է 83108.51 հազ. դրամով: Այսպիսով կարող ենք ասել, որ նյութատարության կրճատումն իր դրական ազդեցությունն է ունեցել կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող առանցքային ցուցանիշների վրա, և պետք է անընդհատ բարելավել նյութատարության մակարդակը:

Աղյուսակ 3

Նյութատարության փոփոխության ազդեցությունը ինքնարժեքի և թողարկման ծավալի վրա (արտադրանքի ամբողջ ծավալ)

Ցուցանիշ	2xx0 թ.	2xx1 թ.	Շեղում
1.Թողարկված արտադրանք վաճառքի գներով (հազ. դրամ)	420398.30	731354.90	310956.60
2.Նյութական ծախսումներ (հազ.դրամ)	182902.30	282208.00	99305.70
3.Նյութատարություն	0.44	0.39	-0.05

$\Delta h_{un} = \Delta U_{un} \times U_i = -0.05 \times 731354.90 = -36567.75$

$\Delta U_{un} = -\Delta h_{un} : U_{n0} = - \frac{-36567.75}{0.44} = 83108.51$

Այսպիսով, վերլուծության ընթացքում պարզվել է, որ 2xx1 թ., 2xx0-ի համեմատ, թողարկված ամբողջ արտադրության գծով նյութատարության 5%-ով կրճատումը հանգեցրել է 36567.75 հազ. դրամով ինքնարժեքի կրճատման և 83108.51 հազ. դրամով թողարկման ծավալի աճի: Սակայն, միևնույն ժամանակ, ընտրված արտադրատեսակի միավորների համար նյութատարության մեծությունը և դրա ազդեցությունը ինքնարժեքի և թողարկման ծավալի վրա կարող են տարբեր լինել:

Նյութատարության ցուցանիշը նվազեցնելու համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

1. Նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրմամբ նպաստել թողարկվող արտադրանքի **ինքնարժեքի իջեցմանը**, որը կբերի ինչպես շահույթի բարձրացմանը, այնպես էլ թողարկվող արտադրանքի գնի իջեցմանը՝ կազմակերպությանը շուկայում կայուն մասնաբաժին ապահովելով:
2. **Որակի բարձրացումը** թույլ կտա ընդլայնել շուկայի մասնաբաժինը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: Հատկապես արտաքին շուկայում կայուն դիրք գրավելու համար շատ է կարևորվում արտադրանքի այնպիսի որակի ապահովումը, որը կգոհացնի արտաքին շուկայի խստապահանջ սպառողին:

Որպես արտադրության ծավալների ավելացման պահուստ կարող է հանդես գալ նաև արտադրանքի կազմի և կառուցվածքի բարելավումը: Կազմի և կառուցվածքի բարելավում ասելով հասկանում ենք արտադրանքի տեսականու ընդլայնումը և դրա կառուցվածքում ավելի մեծ պահանջարկ ունեցող ու եկամտաբեր արտադրատեսակների մասնաբաժնի ավելացումը:

Արտադրանքի լայն տեսականին սպառողներին առաջարկում է ընտրության ավելի մեծ հնարավորություն, հետևաբար և, ապահովում է իրացման ավելի մեծ ծավալներ:

Արտադրատեսակները բնութագրվում են գնային և շահութաբերության տարբեր մակարդակներով: Հետևաբար, եթե արտադրության միևնույն ֆիզիկական ծավալի մեջ ավելանում կամ պակասում է բարձր գին ունեցող արանքների բաժինը, ապա փոխվում է արտադրության ծավալի մեծությունը: Արտադրության ծավալի ավելացման միջոց է նաև արտադրանքի կառուցվածքում ավելի բարձր նյութածախս և ավելի ցածր վաճառքի գին ունեցող

արտադրատեսակների փոխարինումը ավելի ցածր նյութածախս և ավելի բարձր վաճառքի գին ունեցող արտադրատեսակներով:

**ЭЛЕН АВАЛЯН**

## **АНАЛИЗ ВЛИЯНИЯ МАТЕРИАЛОЕМКОСТИ НА ОБЪЕМ ПРОИЗВОДСТВА**

**Ключевые слова:** *материалоемкость, материальные затраты, прибыльность, объем производства.*

*Повышение эффективности использования сырья и материалов в сфере материалаемной производства имеет значительное влияние, поскольку связанные с ними затраты составляют большую часть себестоимости производства и сокращение этих затрат при выпуске каждой единицы дает значительный результат в масштабах всего предприятия.*

*Если предприятие поставило себе цель получения прибыли, значит средства должны использоваться более эффективно.*

*В настоящее время одним из наиболее важных вопросов любой производственной организации является эффективное использование материальных ресурсов, поскольку материальные затраты составляют основную часть расходов производства, от которой напрямую зависит величина прибыли.*

*Эффективное использование материалов приводит к улучшению экономической деятельности организации, повышению показателей рентабельности. Эффективное использование материальных ресурсов улучшает экономические показатели, характеризующие эффективность производства, а недооценка материальных ресурсов, может привести к невыполнению производственных программ и т. д.*

*В настоящее время одной из наиболее важных проблем является уменьшение материалоемкости, изучение всех факторов, от которых зависит эффективное использование сырья и материалов.*

**ELEN AVALYAN**

## **ANALYSIS OF THE IMPACT OF MATERIAL ON PRODUCTION**

**Key words:** *material consumption, material costs, profitability, output.*

*In the manufacturing processes when material usage is comparably high it is very important to raise the efficiency of material usage as this costs are the prevailing part of the overall production cost and even a little deduction in material costs may have a noticeable impact on the entire organization performance.*

*If the company aims to get profit it must use the resources more efficiently.*

*The most important task for all manufacturing companies is to do savings on material usage as the cost of materials is the dominant part of the total manufacturing cost from which the volume of profit mostly depends.*

*Efficient usage of materials leads to a better economic performance and increase in profitability indexes. Economical usage of materials increases manufacturing efficiency indexes while underestimating this factor may refer to uncompleted manufacturing plans.*

*Nowadays, it is crucial to decrease material consumption exploring all the related factors which are related to efficient usage of inventory.*